ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1/2020
12.01.2016թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1 պետական գնման պայմանագրի

ք. Երևան **« 24 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 12.01.2016թ. կնքված **ՆԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 10,043,200 (տասը միլիոն քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները համաձայն հավելված 3-ի:

1.5 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.6 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:
7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ տարածքային կառավարման և	«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, ք. Մեղրի, Գործարանային 89
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Արդշինբանկ» ՓԲԸ Մեղրի մ/ճ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 2470200016540000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 09700228
ՀՀ 900011012136	տնօրեն
գլխավոր քարտուղարին փոխարինող	Ա. Գասպարյան
Հ. Բատիկյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1 գնման պայմանագրի
«24» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/2-1/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	2020թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Սյունիքի մարզի Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջի պահպանման աշխատանքներ	2,510,800	2,510,800	2,510,800	2,510,800	10,043,200

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ Մեղրի մ/ճ
ՀՀ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228
տնօրեն
Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՄԻԳ-16/2-1 գնման պայմանագրի
«24» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՄԻԳ-16/2-1/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(2020 թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀ Սյունիքի մարզի Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջի պահպանման աշխատանքներ	-	1,673,867	1,673,867	4,184,667	4,184,667	4,184,667	6,695,467	6,695,467	6,695,467	10,043,200	10,043,200	10,043,200	**10,043,200**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ
ՀՀ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ Մեղրի մ/ճ
ՀՀ 2470200016540000
ՀՎՀՀ 09700228
տնօրեն
Ա. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.